

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարության անտառային կոմիտեի թափուր պաշտոնը ժամանակավոր զբաղեցնելու մասին

1. Գնումների բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 16/1-3.1-4)

Մասնագետը կազմում է Կոմիտեի ու համակարգի կարիքների համար, պետական բյուջեով (պետական պատվերով) և Կոմիտեի տնօրինման տակ գտնվող արտաբյուջետային միջոցներից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում իրականացվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման պայմանագրեր կնքելու համար սահմանված կարգով գնման հայտերը: Մասնագետը նախապատրաստում է գնման պայմանագրերի նախագծերը, կնքված գնման պայմանագրերի դրույթների կատարման ընթացքի նկատմամբ իրականացնում է նախնական հսկողություն և արդյունքների ամփոփում: Մասնագետը իրականացնում է ապրանքների ձեռքբերման, ծառայությունների մատուցման գնման, ինչպես նաև դրանց դիմաց վճարման ժամանակացույցերի կազմման աշխատանքները: Ունի այլ իրավունքներ ու պարտականություններ՝ համաձայն պաշտոնի անձնագրի:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- **բարձրագույն** կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Գնումների մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 386-Ն որոշումների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1, 2):

- Աշխատավարձը՝ 175.932 (մեկ հարյուր յոթանասունհինգ հազար ինը հարյուր երեսուներկու) դրամ:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

* * *

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում,
- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի պատճենները՝ բնօրինակների հետ միասին.
- արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասի կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին.
- մեկ լուսանկար 3x4սմ չափի,
- անձնագրի պատճենը:

**Փաստաթղթերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության
Բնապահպանության նախարարության անտառային կոմիտեի անձնակազմի
կառավարման բաժնում կամ էլեկտրոնային փոստի միջոցով
m.badalyan@forestcommittee.am հասցեով ժամը 10⁰⁰-ից 13⁰⁰-ը ամեն օր, բացի
շաբաթ և կիրակի օրերից**

Հասցե՝ ք. Երևան, Արմենակյան 129 (3-րդ հարկ),
հեռ.՝ 010 650 966

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 11.02.2019թ.: